Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ, 21 դասաժամ և 20 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

– դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3×4 չափի,

– բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

– անձը հաստատող փաստաթուղթ,

– «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

– ինքնակենսագրություն (Ձեւ 5),

– այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

– ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

– հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

– որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 30-ից մինչն սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչն 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14:00, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոցում, հասցեն՝ գ. Մեծ Մասրիկ 4փ.,5 նրբ., N4:

Տեղեկությունների համար զանգահարել 098-80-87-80 հեռախոսահամարով: